



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

6463

\$91.99  
4-79

.99  
-79

# ՄԱՐԴ-ԳԱՅԼ

63

ԳՐԵՑ

ԳՐԻԳՈՐ ԱՆԻՏԵԱՆՅ.

300  
6-ԱՀ

ՄՈՍԿԻԱ.  
ԶՈՒԱՐԱՆ ԵՎ ՏՊԱԾ Օ. Օ. ՀԵՐԲԵԿ.

1890

891.542-3  
ՀՀ-78

ԿՄ.

ՄԱԾԱ-ԳԱՅԼ

100/  
1083 2



ՄՈՍԿԻԱ:  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՏՊԱՐԱՆԻ Օ. Օ. ՀԵՐԵԿ.  
1890.

2011

Дозволено цензурою. С.-Петербургъ, 9 Декабря 1889 года

2003

## ՄԱՐԴԻՎԱՅՐ

### 1.

Աղա Կարապետ Զիսոյեանը երկայն հասակով՝ թուխ գէմքով՝ հաստ և երկայն բեխերով՝ խորամանկի խոր ընկած աչքերով՝ լայն, ատամնաթափ բերանով և հայկական մեծ քթով մարդէր։ Սչքերից թափում էր նրա խորամանկութիւնը։ Նա սաստիկ ժլատ էր, միայն ուրիշների համար, իսկ իրա համար առատ-շատ առատ։

Աղա Կարապետը հարուստ էր. ունէր սպիտակ նաւթ քաշելու գործարաններ, Սե և Կասպից ծովերի վրայ շոգենաւեր, առա-

գաստաւոր նաւեր, Շ... քաղաքում ապրեցուի գործարան, Բ... քաղաքում մի քանի հատ զանազան տեսակի ապրանքներ ծախելու խանութիւներ: Նա մեծ ընտանիքի տէր չէր. ունէր մի կին, որ չըեր էր, մի քոյր և մի չպատրւած եղայր: Բայց չնայած այդ բանին, նա շատ մեծ տան էր ապրում: Նրա տունը տասը — տասնեւլինդ սենեակներից էր բաղկացած: Ընտանիքի թուի չափ էլ ծառաներ էր պահում: Այդ ծառաների թւում գտնուումէր և մի տասնեւլից տարեկան հայ աղջիկ, որին՝ նրա աղքատ ծնողների համաձայնութեամբ՝ աղա Կարապետը «որդիգիր» էր վերցրել ինքը երեխայ-բան ըռնէր: Նա խոստացել էր այս աղջկայ ծնողներին՝ ուսում, խելք, շնորհք սովորեցնել իրանց աղջկան և վերջն էլ մի լաւ մարդու տալ: Էլ դրանից լաւ բա՞ն, ի՞նչու չհամաձայնուել և չտալ:

Այդ աղջիկը՝ որի վրայ կանգ պիտի առնեմ, գեղջկուցի էր: Նրա համագիւղացիները միշտ երանի էին տալիս նրա ծնողներին. աղջկայ ծնողներն էլ մտածում էին իրանց աղջկայ և իրանց ապագայ երջանկութեան մասին....

Աղջիկը շատ գեղեցիկ էր և ներկայացնում էր իսկական հայուհու տիպար. թուի դէմք, սև սև, երկայն թերթերունքներով աչքեր, հայկական ոչ այնքան մեծ քիթ, պատիկ բերան, կարմիր թշեր, հասած կուրծք, բարակ մէջք, չինարի հասակ և որ գլխաւորնէ՝ երկայն սև մազեր: Ահա թէ ի՞նչ աղջիկ էր աղա Կարապետի որդիգիրը: Բայց այդ ամենը չէ դեռ. նա բնաւորութեամբ հանդարդէր, խոնարհ, խելօք և համբերող ամենայն նեղութիւնների:

Այդպիսի մի աղախին ունենալը, աղա Կարապետը իրա համար մեծ պատիւ էր

Համարում: Նա ընչափազցութեան հետ և  
փառասէր էր. նրան շատ դիւր էր գալիս երբ  
երեսը լւանալիս մէկը ջուրնէր ածում, միւսը  
երեսսրբին էր տալիս, երբորդը սապոնը.  
կամ թէ, կառքով մի տեղ գնալիս, մի ծառայ  
նատում էր կառապանի մօտ: Պետքէ ասած  
այստեղ և այս, որ աղա կարապեաը ծառա-  
ներ ընարում էր նրանց գեղեցկութիւննե-  
րին նայելով: Նրա ծառաները բոլորնէլ թիվ-  
լիսից բերած իմերեններ էին:

2.

Անցել էր ուղեղ կէս տարի այն օրից, երբ  
Ովսաննան, իբրև որդեգիր, ոտ էր կոխել  
աղա կարապեաի տան շմբով: Բայց աղան  
իրա խոստմունքից մի մասն անդամ չէր շար-  
ժել օրիորդ Ովսաննան ոչ այլ ինչ էր նրա

տանը, բայց եթէ մի աղախին: Եւ իբրև ա-  
ղախին, Ովսաննան օրուայ մեծ մասը անց  
էր կացնում խոհանոցում, այնպէս որ նա  
ներկայ էր լինում ազայի իմերել ծառաների  
լիսի շարժումներին և լիդր խօսակցութիւն-  
ներին: Խեղճ Ովսաննան չունէր ոչ մտաւոր  
և ոչ ֆիզիքական որևէ զբաղմունք—և ի՞նչ  
տեղեց լինէր. ով էր տւել, որ կարողանայինք  
պահանջել:

Տիկին Սննա Զիպոյեանը իրա ամուսնու  
հակապատկերն էր ներկայացնում արտա-  
քուստ, իսկ ներգուստ նշյնը, ինչ որ էր աղա  
կարապեաը: Տիկին Զիպոյեանը խօսքի բուն  
նշանակութեամբ՝ գեղեցկուհի էր: Նրան  
պաշտող երիդասարտների թիւը շատ ա-  
հագինէր:

Նա երեկոները դրսերումն էր անց կոց-  
նում շռայլ կետնիք վարելով: Մի անգամ

պարահանդէսից ուշ տուն գառնալով նա  
սաստիկ մրսում է և հիւանդանում:

Աղա Կարապետը, որ շատ տիրել էր նրա  
հիւանդութեամբ, կիսախելագարի էր նմա-  
նում:

Բժիշկը խորհուրդ տուաւ թ... քաղաքը  
ուղարկել տիկնոջը, որը և կատարեց աղա  
Կարապետը, ուղարկելով թ...ի ամարանոց-  
նիրից մէկը իրա եզօր հետ իւր ամուսնուն  
և նրա քրօջը: Ինքը և իրա ծառանելը՝ ի  
թիւս որոց և Ովսաննան մնացին թ...ում:

3.

Անցել էր երեք օր:  
Յուլիս ամիսներս...

Թ... քաղաքի տաք օրերից մէկն էր: Աղա  
Կարապետը կէսօրից յիտոյ գնաց քնելու,

պատուիրելով ծառաներին տանից գուրս  
գնալ, երեկոյիան շուտ տուն վերագառնալու  
պայմանով:

Ծառաները ամենքնէլ գնացին, տանը մնաց  
մենակ Ովսաննան, որ իրա առանձնասենեակը  
մտնելով պառկեց անկողնի վրայ: Նա նմա-  
նում էր անմեղ թոչնակի, որին չար մարդիկ  
բունելով հեռու հեռու են տանում հայրե-  
նիքից և վանդակի մէջ փակելով, պատուի-  
րում են անդադար երգել: Երգել...

Ովսաննան ընկել էր մտածութեան հորի  
մէջ:

Նրան թւում էր թէ ինքը գտնուում է ի-  
րանց գիւղում, աննման Դ...ում, ահա իրանց  
անակը, ահա ծերունի հայրը, փայտը ձեռին,  
էշը առաջը քցած բաղր մտաւ... իրանց այ-  
գուցնէ գտալիս, տանձու խնձոր է բերել: Ահա,  
ահա պառաւ մայրը, շէրէվը ձեռին, կաթ-  
սայի առաջ ձմեռուան համար պաշար է

պատրաստում — խաղողեց շերայ է եփում։  
Աշա իրա մեծ քջլր, հողէ ամանը ձեռին,  
կովի առաջը պըպըզած կաթէ կթում։ Աշա  
և ինքը, նստած տանձենու տակ, պստիկ  
եղօր համար շապիկ է կարում։ Բայց նա  
ովէ է, այն անծանօթը... օհ, դա իրանց  
պարտատերն է, աղա Կարապետը... եկել է  
փող ստանալու համար։ Թու... անիծուած  
մարդ... ինձ ջոկել է ուզում մօրիցս... ան-  
գութ ճնողք, դուք էլ համաձայնում՞ք...

— Ովսաննա, լսուեց աղա Կարապետի  
խոպոտ ձայնը։

Ովսաննան քնից սթափուելով դուրս  
եկաւ սենեակից։ Նրա սենեակի առաջ կան-  
գնած էր աղան։

— Ովսաննա, ինձ համար դայլան բեր,  
և եկ ինձ մօտ, առանձնասենեակս, բան ու-  
նիմ քեզ ասելու, այս ասելով աղա Կարա-  
պետը իւր սենեակը մտաւ։

Աղա Կարապետը Պարսկաստանում եր-  
կար մնալով վերցրել էր պարսիկներից մի  
քանի սովորութիւններ։ Նրանց շորի ձեր  
և դայլան քաշելը։

Երբ որ Ովսաննան դայլանը ներս բերեց,  
աղան վերցրեց նրա ձեռքից այն, և խնդրեց  
Ովսաննային իրա կողքին նստել։ Միամիտ  
աղջիկը չնստեց, մտածելով որ պարկեշուու-  
թիւնից դուրս բանէ աղանին աղայի մօտ  
նստելը։

— Նստիր կողքիս, ասաց աղա Կարա-  
պետը Ովսաննային առաջուանից աւելի սի-  
րալիր ձայնով։

Ովսաննան նորից չնստեց։ Աղա Կարա-  
պետը երրորդ անգամ և աւելի համոզկեր  
ձայնով ինդրեց նրան նստել։ Ովսաննան  
նստեց մեքինայօրէն։ Նրա երեսը տաքութիւ-  
նից վառվում էր — անմեղ կուրծքը լայն  
բացվում, խիվում։ Խեղճ՝ աղջիկը սպասում

Էր թէ ի՞նչ կխօսէ, կամ կանէ աղան: Այս  
սովորականից դուրս վարմունքը շարժեցրեց  
Ովսաննայի գլխում մի միտք թէ՝ մի՞ դուցէ  
աղա կարապետը՝ ի վերջոյ պատրաստում  
է իւր խոստումները՝ ի կատար ածել: Ահա  
այն խօսակցութիւնը որ կարձատելուու-  
թիւնից յետոյ սկսեց աղա կարապետը.

— Ովսաննա, հոգիս, ինձ տուր ձեռքբ,  
և վերցրեց ափերի մէջ աղջկայ ձեռքը:

— Ի՞նչնախշունեն, — շարունակեց նա, —  
ուխայ, և Ովսաննայի փափլիկ ձեւները  
սեղմեց իւր կրծքին. ի՞նչ նախշուն թշեր  
ունես, թող մի համբուրեմ, և խլեց Ով-  
սաննայի թշեց մի համբոյր:

Ովսաննան դեռ ևս չէր հասկանում թէ  
բանն ինչումն է, չէր հասկանում քունէ թէ  
արթուն: Իրականութիւնն իմանալու հա-  
մար նա ձեռքը մեկնեց դէպ աղան: Նրա  
ձեռքը կպաւ աղային....

— Ուրեմն, — մտածեց աղան ինքն իրան, —  
աղջեկն հասկանում է ինձ, լաւ ուրեմն, լաւ  
տեղն եմձգել և, առանց երկար բարակ մտա-  
ծելու, Ովսաննայի երեսը դէպի իրան մօտեց-  
նելով, նրա թշեց երկրորդ, երրորդ, չորրորդ  
համբոյրները քաղեց:

— Ուխայ, — ասեց Ովսաննային համ-  
բուրելուց յետոյ կարապետ աղան, — ի՞նչ  
լաւն է:

Ովսաննան դեռ նոր հասկանալով բանի  
էութիւնը, կամեցաւ դուրս պլծնել բայց  
ուշ էր արգէն: աղան նրան պինդէր բռնել...

— Այլ ևս, հոգիս, ուշէ:

Սենեակում տիրեց լրութիւն:

— Ի՞նչու ես չարչարվում, հոգիս, զուր  
ժամանակ կորցնել տալիս: Ովսաննան մի  
քանի անգամ անզօր կերպով այս կողմ այն  
կողմ գալարուելուց զինի տեղի տւաւ իւր

բոնաւորին, որ և շտապեց իւր զոհը կլանել...

Քայլը ձանկել էր որսը...

4.

Այս դեպքից յետոյ անցել էր եօթն ամիս:

Դեռ Կարապետ աղայի ընտանիքը թուից չեր եկել:

Երեկոյ էր...

Աղան նատած իւր առանձնասենեակում հաշուէմատեանները ցիրուցան առաջին համրիչի հատիկները չխչիկացնելով, մի ինչ որ հաշեւ էր անում:

— Ո՞վէ, — կանչեց նա, լսելով բացւող գոռան ձայնը:

— Ես, աղա, հեռագիրէ, — ասաց ծառա-

ներից մէկը ներս մանելով և հեռագիրը նրան տալով:

— Լաւ, կորի՞ր գու, գոռաց աղան:

— Բայց, աղա, հինգ կոպէկը չք տալիս որ տամ իրան, ախար ուզում է, — ասաց վախվախելով ծառան:

— Յիմար, ասա աղան տանը չէ, պրծաւ գնաց, ի՞նչ հինգ կոպէկ: Տունս հօ չք քանդելու: Դուրս:

Ծառան գողգողալով դուրս վաղեց: Աղան հեռագիրը բացեց:

— Աստուած, — գոռաց նա և գլորուեցաւ յատակի վրայ հեռագիրը վերջացնելուց յետոյ, — Ահնա՛ ..

Իսկոյն, սովորած շների նման, աղաղակի վրայ իմերել ծառաները ներս թափուեցին և տեսնելով գետնին փռուած աղային, մօտեցան նրան: Աղան ուշագնաց էր եղել, ծառաները սկսեցին ուշքի բերել նրան:

Մինչ ծառաներից մէկը Ովսաննայի հետ  
ուշքի էին բերում աղային, երկուսը նրան-  
ցից հետազիլը, որ ընկածէր աղայի մօտ,  
յատակի վրայ, վերցրած սենեակի անկիւ-  
նում կարգում էին:

— Սիմեոն, այդ ի՞նչ է գրած,— հարցրեց  
հետազիլը կարգացողին միւսը վրացերէն,—  
ի՞նչ է գրած:

— Ի՞նչ է գրած, գրածէ խանումը մէռաւ:  
Դուել շուտ եկ, որ թաղենք: Ստորագրածէ  
Մարկոս:

— Խիստ լաւ եղաւ, պատասխանեց միւ-  
սը և մօաեցան երկուսով աղային ուշքի  
բերողներին օգնելու:

—

Միւս օրը աղա Կարապետը ճանապար-  
հուեց թ...



— Ովսաննա, Ովսաննա, կամաց ովա-  
կարապետը:

Անցելէր երեք ամիս աղայի թ... գնալու,  
կնոջը թաղելու և յետ դառնալու օրից:  
Առաւօտ էր....

Նա նստած իւր առանձնասենեակում,  
քիթը թամբած ակնոցներով քրքրում էր  
հաշուեմատեանները և թէյ անուշ անում:

— Ովսաննա... կրկին կանչեց նա և ոտով  
այնպէս խփեց յատակին, որ իրա առաջ  
գրած կոլոր սեղանը վայր ընկու, և թա-  
փուեց նրա վրայ դրած թէյով բաժակը:—  
Ովսաննա... կամենում էր նորից կանչել,  
բայց լսեց.

— Համմէ է, — ասաց ներս մտնելով Ով-  
սաննան, և չհամարձակուելով աչքերը վեր

բարձրացնել, հարցրեց. — Ի՞նչ էք հրամայում:

— Ես, ասաց բարկացած աղան, — կարճ պիտի կարեմ, դուշաւ գիտես, որ ես քեզ խեղճ գալով քո ծնողների մօտից վերցրի, վերցրի որ ինձ որդեգիր շնում: Արդեօք դուելքո սուրբ պարաւականութիւնը կատարեցիր. սուրբ եմ ասում, հասկանում եմ: Ո՛չ դու մեղանչեցիր, դու չկատարեցիր, դու արդէն մի երեխայ ունես: Այդ է քո դէպի ինձ ունեցած պատիւը, սէրը, այդ է քո իմ աղջեկ լինելը: Դու մեղանչեցիր, դու արդէն մի որդի ունես... Ասա, ո՞վ է այդ երեխայի հայրը շուտ ասա, թէ չ'....

— Տէր, ասաց ցածր ձայնով Ովսաննան, — միթէ դուք մոռացելէք, տէ՛ր, միթէ դուք չէիք որ...

— Ի՞նչ, ի՞նչ... անզգամ, — գոռաց աղան և ձեռքելը շարժելով գնաց դէպի նա: Դու

դեռ համարձակվում եմ ասել թէ, թէ... ասա, ասա Ճշմարիտը, այդ երեխայի հայրը ով է....

Ովսաննան լրւո էր... նա չէր կարողանում պատասխանել նա լաւ տեսնում էր և լաւ հասկանում թէ աղան իրա հետ ինչպէս էր վարվում, նա լաւ տեսնում էր թէ ինչպէս էր աղան կամենում ծածկել իրա մեղքը: Նա լաւ հասկանում էր և լրում, քաջ իմանալով, որ իրա ասածը բանի տեղ չի գնալ, իրա ասածը, որ աղայի ասածի մօտ ովնչէ:

— Քեզ հետ չեմ, ուրեմն չն ուզում ինձ պատասխանել: Դէ գուրս ուրեմնի իմ տանից, վերցրուքո ապօրինի զաւակը և դուրս իմ տանից, դուրս իսկոյն և եթ. ես իմ տանը քեզ նման անբարոյական կանայք չեմ կարող պահել, դու արատ ձեցիր անուանս վրայ, դու իմ... իմ... Զկարողացաւ շարունակել

աղա Կարսապետը, այնքան պինդ էր գոռա-  
ցել որ ձայնը կարուել էր:

— Դէ դուքս, ասաց ցածր և խռապոտ  
ձայնով աղան: Դուքս իմ բարոյական տա-  
նից, անբարոյական կին: Դուքս:

6.

Օրը կիրակէ էր:

Սրեգակը հասելէր իրա գագաթնակէտին:  
Հայոց եկեղեցումսուրբ պատարագը վեր-  
ջացել էր արդէն: Եկեղեցու բագը լեբնէր  
բազմութեամբ: Մի տեղ հաւաքուել էին  
ուսանողները և վիճում էին մի ինչ որ բանի  
վրայ տաք տաք, միւս կողմում ինտիկենստ  
կոչուած դասին պատկանողներն էին շա-  
րուել և ծիծաղում էին սրա նրա վրայ,  
եկեղեցու ծառերից մէկի տակ էլ իշոտնուկ-

ների վրայ միքանի ծերեր նատած զըսց էին  
անում: Օրիորդները ևս տիկինների հետ  
իւրեանց կարգին խմբուել էին զանգակա-  
տան տակ և բացել իրանց մօդայի պօխչան:  
Շատ չտեսեց այդ ամենը, բոլորնէլ սկսեցին  
կամաց կամաց գուրս գնալ և ցրուել իրանց  
տները: Եկեղեցու բագի դռների մօտ աջ և  
ձախ շարքով նստել էին աղքատներ: Դրանց  
մէջ կային երկու սեռիցէլ թէ ծերեր, թէ  
երիտասարդներ և թէ երեխաններ: Բոլորն էլ  
ձեռքները մեկնած ողոլումութիւն էին խնդ-  
րում անցնողներից:

Դրանց վրայ ուշարպութիւն դարձնող  
չկար. ամենն էլ լուռ ու մունջ անցնում  
էին:

Ի՞չքան էլ որ լուռ ու մունջ կամենային  
անցնել դրանք, այնուամենայնիւ ուշարպու-  
թիւն չէին կարող չդարձնել մի կնօջ վրայ,  
որ երեխան դրկած բակի մէջ տեղ չլինելու

պատճառաւ, եկեղեցու փողոցի պատի տակ  
կուշ եկած իրա կարգին ողորմութիւն էր  
աղերսում:

— Բարի պարոններ, սիրուն տիկիններ,  
փափկասուն օրիորդներ, ողորմութիւն տու-  
եք խղճուկիս: Հացի փող միայն... բարի  
պարոններ, սիրուն տիկիններ...

Անցնողները բոլորն էլ ուշադրութիւն էին  
դարձնում նրա վրայ. ոչ ողորմելու մտօք,  
այլ ապշած նրա գեղեցկութեամբ:

— Սպասիր, ընթերցող ձեռքդ գրպանդ  
կոխիր, ողորմութիւն է հարկաւոր տալ դա-  
քո նախին ծանօթ — Ավսաննանէ, այն  
Ովսաննան, որի հետ աղա Կարապետ Զի-  
պյեանը այնպէս գաղանաբարց կերպիւ  
վարուեցաւ և տանից դուրս արեց: Այդ ե-

ուեխան էլ, որ նա զրկածէ, իրա որդին է:  
Այժմնա ընկած փողոցները ման է գալիս և  
ողորմութիւն հաւաքում իրա սիրելի երե-  
խան, անկնունք մնացած երեխան, կերակրե-  
ուու համար:

— Ողորմութիւն տուր:



6463

2013

၁၀ မြတ်သူ ၃၇

